ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2026թ. թիվ 210-Ա

ՄԻԼԼԵՆԱ ՄԱՄՈՒԼՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐՋՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 2)-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2026 թվականի մարտի 25-ի թիվ 198-Ա որոշումը և հաշվի առնելով Մ.Մամուլյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Միլլենա Ջաուրի Մամուլյանին 2026 թվականի ապրիլի 1-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Արջուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

2. Մ.Մամուլյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. մարտի 31
ք.Վանաձոր